ԿԱՐԾԻՔ

Արա Անդրանիկի Ավետիսյանի «Ֆինանսական հատվածի ազդեցությունը տնտեսական աճի վրա» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.08 - «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական և իրական հատվածների միջև փոխառնչությունների գնահատումը մշտապես եղել է տնտեսագիտության առանցքային հարցադրումներից: Տնտեսագիտության մեջ գերակշռող էր համարվում այն տեսակետը, որ ֆինանսական շուկաներում տեղի ունեցող տատանումները հանդիսանում են տնտեսական անկման պասիվ ցուցիչ, իսկ վերջիններիս իրենց հերթին իրական մակրոտնտեսական փոփոխականների, և մասնավորապես տնտեսական աճի վրա չունեն նշանակալի ազդեցություն: Տնտեսագիտական մոդելավորման խնդիրներում վերոնշյալ ազդեցությունների գնահատմանը բավարար չափով կարևորություն չէր հատկացվում: 2008 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո այս տեսակետը ակնհայտորեն ժամանակավրեպ դարձավ: Տնտեսության մոդելավորման ժամանակակից խնդիրներում ավելի ու ավելի մեծ ուշադրություն սկսեց դարձվել ֆինանսական հատվածի անկատարությունների պայմաններում իրական մակրոտնտեսական փոփոխականների վրա տնտեսական շոկերի ազդեցության գնահատմանը:

Ատենախոսության շրջանակներում ֆինանսական հատվածի ազդեցությունը տնտեսական աճի վրա ուսումնասիրվել է երկու հիմնական ուղղությամբ՝ ինսիտիտուցիոնալ աճի համատեքստում ֆինանսական ինսիտիտուտների և տնտեսական աճի փոխազդեցությունների գնահատմամբ, և ՀՀ տնտեսության օրինակով ֆինանսական աքսելերատորի ազդեցության գնահատմամբ:

Իրական մակրոտնտեսական փոփոխականների վրա ֆինանսական հատվածի ազդեցության ուսումնասիրությունը այժմ հատկապես արդիական է ՀՀ տնտեսության պարագայում՝ կապիտալի շուկաների թերզարգացվածության, վարկային միջոցները կազմակերպությունների համար որպես ֆինանսավորման հիմնական աղբյուր դիտարկման, ինչպես նաև վարկավորման վրա ուղղակի ազդեցություն ունեցող անշարժ գույքի շուկայում առկա գերտաքացման հանգամքները դիտարկելու պայմաններում:

Վերոնշյալ հանգամանքներով է պայմանավորված ընտրված թեմայի արդիականությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակը իրական մակրոտնտեսական փոփոխականների (մասնավորապես՝ տնտեսական աճի), և ֆինանսական հատվածի միջև փոխառնչությունների, ինչպես նաև ֆինանսական անկատարությունների պայմաններում աքսելերատորի մեխանիզմի ազդեցության գնահատումն է ՀՀ օրինակով: Տվյալ նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել ֆինասնական և իրական հատվածների միջև փոխառնչությունների բացահայտմանը վերաբերող տեսական մոտեցումներն ու առավել նշանակալի հետազոտությունները,
- Ուսումնասիրել տնտեսական աճի ինստիտուցիոնալ տեսությունը և հետազոտությունները, գնահատել ֆինանսական ինստիտուտների ազդեցության՝ նշված տեսության շրջանակներում դիտարկելու նպատակահարմարությունը,
- Ուսումնասիրել ակտիվների գնագոյացման, մասնավորապես՝ ակտիվների գների փուչիկների ճանաչման և արձագանքմանն ուղղված տեսություններն ու մոդելները,
- Վերլուծել զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրների տնտեսական աճերի դինամիկան և վերջիններիս բաշխման վարքագիծը ժամանակի ընթացքում,
- Սահմանել ինստիտուտների (մասնավորապես՝ ֆինանսական) զարգացվածությունը չափող փոփոխականներ և տարբեր երկրների համար վերլուծել վերջիններիս դինամիկան,

- Վերլուծել ՀՀ-ում կազմակերպությունների կողմից ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունների վրա ազդեցություն ունեցող գործոնները՝ կենտրոնանալով գրավային ապահովվածության դերի վրա,
- Վերլուծել ՀՀ-ում անշարժ գույքի շուկայի գների դինամիկան և վերջինիս վրա պոտենցիալ ազդեցություն ունեցող գործոնները,
- Գնահատել տնտեսական աճի վրա ինստիտուտների ազդեցությունը՝ կենտրոնանալով ֆինանսական ինստիտուտների վրա,
- Գնահատել Ֆինանսական աքսելերատորի միկրոհիմքերի առկայությունը ՀՀ-ում,
- Վիճակագրական մոդելների կիրառմամբ գնահատել ակտիվների գներում փուչիկների առկայությունը՝ կենտրոնանալով ՀՀ անշարժ գույքի շուկայի վրա,
- ՀՀ տնտեսության օրինակով գնահատել ֆինանսական աքսելերատորի մեխանիզմի ազդեցությունը իրական մակրոնտեսական փոփոխականների վրա,
- Ներկայացնել նշված ազդեցությունների բացահայտումից բխող քաղաքականության բարելավմանն ուղղված առաջարկություններ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվել է հետևյալ հիմնական դրույթներում.

- Վիճակագրական/էկոնոմետրիկական մոդելների միջոցով գնահատվել է երկրների համախառն ներքին արդյունքի վրա ինստիտուտների ազդեցությունը,
- Որպես ինստիտուտների առանձին համախումբ՝ գնահատվել է ֆինանսական ինստիտուտների ազդեցությունը երկրների տնտեսական աճի վրա, և հիմնավորվել է տնտեսական աճի վրա ֆինանսական ինստիտուտների վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը,
- ՀՀ բանկային համակարգից ստացված ինֆորմացիայի հիման վրա էմպիրիկ վերլուծության միջոցով բացահայտվել է, որ ՀՀ ֆինանսական համակարգում միկրոմակարդակում առկա է աքսելերատորի մեխանիզմ,
- Հիմնվելով ՀՀ ֆինանսական համակարգում, որպես աքսելերատորի մեխանիզմի մաս՝ գրավային ապահովվածության ազդեցության գնահատված կարևորության

վրա՝ մշակվել/կիրարկվել են անշարժ գույքի գներում փուչիկների վիճակագրական թեստավորման մոդելներ,

- Իրականացվել է ֆինանսական աքսելերատորի և գերիշխող արտարժույթի ենթադրությամբ դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (DSGE) մոդելի կալիբրացիա, գնահատվել են դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների շոկերին համախառն ներքին արդյունքի և այլ մակրոտնտեսական փոփոխականների արձագանքը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունների բաժնից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը շարադրված է 143 էջի վրա:

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը, ստացված գիտական նորույթները, հետազոտության գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Ֆինանսական և իրական հատվածների միջև փոխառնչությունները» գլխում ներկայացվում են ֆինանսական և իրական հատվածների փոխառնչություններին առնչվող տեսությունները և մոդելները: Վերը նշված ազդեցությունների համատեքստում մասնավորապես դիտարկվել են ֆինանսական աքսելերատորի մեխանիզմի կիրառմամբ մոդելավորման աշխատանքներ:

Գլխում ներկայացվում են նաև այն ճանապարհները, որոնցով ֆինանսական հատվածում առկա անկատարությունները իրենց ազդեցությունն են ունենում կարգավորողների կողմից իրականացված դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմում ֆինանսական աքսելերատորի ազդեցության համատեքստում վարկային միջոցներ ներգրավելիս մեծ կարևորություն է տրվում

կազմակերպությունների կայուն հաշվեկշռի առկայությունը, ինչպես նաև վերջիններիս կողմից առաջարկվող գրավային ապահովվածությունը, աշխատանքում անդրադարձ է կատարվում նաև ակտիվների գների գնագոյացման խնդրին, մասնավորապես՝ հիմնարար արժեքներից շեղումներին կամ «փուչիկներին» և վերջիններիս դրամվարկային քաղաքականության արձագանքի հիմնահարցերին:

Ատենախոսության երկրորդ՝ «Ֆինանսական ինստիտուտների ազդեցությունը Համախառն ներքին արդյունքի վրա» գլխում ֆինանսական հատվածի և տնտեսական աճի փոխառնչությունները ուսումնասիրվել են ինստիտուցիոնալ աճի համատեքստում: Այս հատվածում տարածական և պանելային տվյալներով իրականացված վերլուծությունների օգնությամբ ցույց է տրվում աշխատանքում ներկայացված ինստիտուտների՝ վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը Համախառն ներքին արդյունքի վրա:

Աշխատանքի երրորդ՝ «Ֆինանսական աքսելերատոր» գլխում ներկայացվում է ֆինանսական աքսելերատորի մեխանիզմի ազդեցության գնահատումը ՀՀ տնտեսության օրինակով ինչպես միկրո, այնպես էլ մակրո մակարդակներում: Միկրոմակարդակում գնահատվել է ֆիրմաների կողմից ներդրումային որոշումների կայացման խնդրում ֆինանսական կազմակերպություններից միջոցների ներգրավման արտաքին ֆինանսավորման պրեմիումի ազդեցությունը: Պանելային վերլուծության արդյունքում ցույց է տրվել արտաքին ֆինանսավորման պրեմիումի՝ վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը ֆիրմաների ներդրումային որոշումների վրա:

Աշխատանքի այս գլխում ուսումնասիրվել են ակտիվների գնագոյացման մոդելներ, և վերջիններս կիրառվել են Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում գերտաքացման կամ «փուչիկների» առկայության թեստավորման նպատակով:

Ատենախոսության այս գլխում աքսելերատորի ազդեցությունը մակրոմակարդակում դիտարկելու նպատակով իրականացվել է ՀՀ տնտեսության օրինակով ֆինանսական աքսելերատորի և գերիշխող արտարժույթի ենթադրությամբ դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (DSGE) մոդելի կալիբրացիա, և դիտարկվել են իրական մակրոտնտեսական փոփոխականների վրա դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների շոկերի ազդեցությունները:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են հետազոտության արդյունքում ստացված եզրահանգումները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ստացված արդյունքներն ունեն գործնական և տեսական նշանակություն: Դրանք կարելի է կիրառել դրամավարկային քաղաքականության մշակումների համար, բանկերի, վարկային կազմակերպությունների և ֆինանսական միջնորդ այլ կազմակերպություններում որոշումների կայացման խնդրիրներում արդյունավետության բարձրացման համատեքստում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունը զերծ չէ թերություններից: Դրանք են.

1. Աշխատանքի 2.2 «Համախառն ներքին արդյունքի վրա ինստիտուտների ազդեցության քանակական գնահատումը» ենթագլխում դիտարկվում է քաղաքական և տնտեսական ինստիտուտների ազդեցությունը մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքի վրա: Ազդեցությունների գնահատման մասով նպատակահարմար կլիներ ի լրումն քաղաքական և տնտեսական ինստիտուտների համար չափող փոփոխականներ հանդիսացող ինդեքսների, մոդելում դիտարկել նաև մակրոտնտեսական այլ փոփոխականների ազդեցությունը:
2. Աշխատանքը կշահեր, եթե 2.3 «Ֆինանսական ինստիտուտների ազդեցությունը տնտեսական աճի վրա» ենթագլխում դիտարկվեր նաև վարկավորման գործընթացում ուղղակի չներգրավված ֆինանսական ինստիտուտների ազդեցությունները, ինչպիսիք են օրինակ ներդրումային կամ կենսաթոշակային ֆոնդերը:

3. Աշխատանքի 3.1 «Ֆինանսական աքսելերատորի միկրոհիմքերը Հայաստանի Հանրապետությունում» ենթագլխում ֆիրմաների ներդրումային որոշումների համար որպես չափող փոփոխական դիտարկվում է հիմնական միջոցների ցուցանիշի փոփոխությունները: Նպատակահարմար էր ունենալ ավելի մանրամասն տարանջատում (օրինակ՝ սարքավորումների, կամ շենք-շինությունների արժեքների փոփոխությունը), որը թույլ կտար ավելի ճշգրիտ չափել իրականացվելիք ներդրումները:
4. Աշխատանքի 3.2 «Ֆինանսական աքսելերատորի միկրոհիմքերը Հայաստանի Հանրապետությունում» ենթագլխում Երևան քաղաքում անշարժ գույքի գնագոյացման համար դիտարկումների քանակի ավելացումը էականորեն կբարելավեր մոդելի արդյունքների արժանահավատությունը:
5. Աշխատանքում առկա են տեխնիկական թերություններ՝ մասնավորապես նպատակահարմար կլիներ աշխատանքում տեղ գտած որոշ բանաձևեր, գծապատկերներ և աղյուսակներ տեղափոխել հավելված: Աշխատանքում որոշ դեպքերում եզրույթների թարգմանությունները հստակ չեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունն ինքնուրույն կատարված վերլուծություն է, որում ստացված արդյունքները կարող են բարելավել տնտեսության մաթեմատիկական մոդելավորման խնդիրներում ֆինանսական և իրական հատվածների փոխառնչությունների գնահատման արդյունավետությունը:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, իսկ հրապարակված 6 հոդվածներում ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները:

Արա Անդրանիկի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության վերաբերյալ դիտողությունները հիմնականում չեն ազդում ատենախոսության ընդհանուր գնահատականի վրա: Թեկնածուական ատենախոսությունն ավարտուն հետազոտություն է և ունի գիտագործնական արժեք: Այն համապատասխանում է Ը.00.08-«Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող պահանջներին: Հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը Ը.00.08-«Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ա.Ա. Թավադյան

Պարոն Ա. Թավադյանի
ստորագրությունը հաստատում եմ
ՀՌՀ գիտական քարտուղար
Ռ. Ս. Կասաբաբովա